ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԲԱՄԲԱԿ-ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

633
Հ-99

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ՍՍՀ
Ա. Մաշտոցի անվան

ԳՅՈՒՂՐԱՏ — ԵՐԵՎԱՆ 1935

0 9 SEP 2...

Տպագրության համար
պատրաստեց՝ Ա. Մարուխյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Հրատ. № 261, Գլավլիտ № 283, պատվեր № 542, տիրաժ 1000
Հանձնվել է արտադրության 1935 թ. սեպտեմբերի 2-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. սեպտեմբերի 7-ին

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 11

633
Հ-99
ագ.
04 AUG 2010
39976
1008
35400

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Բամբակի բերքահավաքի կամպանիայի հաջողությունն ամբողջովին կախված է այն աշխատանքներից, որոնք կտարվեն նրա նախապատրաստական շրջանում և նրանից, թե ինչպես կկազմակերպվի բերքահավաքը և ինչպես կտարվի պայքարը կորուստների, բերքահավաքի ու յուրաքանչյուր կիլոգրամ բամբակը պետությանը հանձնելու համար. ըստ որում աշխատանքի ճիշտ կազմակերպման, նրա վարձատրության և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության հարցերը պետք է դրվեն բամբակի բերքահավաքի կազմակերպման կենտրոնում։

Բերքահավաքը նախապատրաստված դիմավորելու և կազմակերպված ձևով անցկացնելու համար բամբակացան շրջանների շրջհողբաժինները, ՄՏ կայանները և կոլտնտեսությունները պարտավոր են ձեռնարկել հետևյալ միջոցառումները։

1. ԲԱՄԲԱԿԻ ՄԻՆՉ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Բոլոր կոլտնտեսությունների և բրիգադիրների համար, ինչպես և յուրաքանչյուր կոլտնտեսության

ՍՍՍՀ ԳԱ ԱԲ

և առանձին բրիգադի համար սահմանել բամբակի բերքահավաքի (ամսական և հնգօրյա) պլաններ։ Այդ պլանները պետք է հասցնել յուրաքանչյուր կոլտնտեսության և բրիգադի և լայնորեն քննության առնել կոլտնտեսություններում, բրիգադներում և աշխատավոր մեհանտնտեսների մոտ։

2. Բոլոր կոլտնտեսություններում ստուգել և աշխորների գրքույկներում գրանցել՝ ցանքի ու մշակման ժամանակ յուրաքանչյուր կոլտնտեսականին վաստակած բոլոր աշխորները։

3. Յուրաքանչյուր բրիգադ մինչև բամբակի բերքահավաքի վերջանալն ապահովել.

ա) բարդանների անհրաժեշտ քանակով.

բ) յուրաքանչյուր կոլտնտեսականին յերկու գըրպան ունեցող գոգնոցով.

գ) վերանորոգված փոխադրական միջոցներով և անհրաժեշտ քանակությամբ լծասարքով.

դ) կշեռքներով։

4. Վերանորոգել գոյություն ունեցող կամուրջները և վորտեղ անհրաժեշտ է, կառուցել նորերը, նույնպես և գյուղամիջյան ճանապարհների փոս տեղերը լցնել և քարերը հավաքել։

5. Ապրոբացիան վերջացնելուց հետո, անմիջապես, ՄՏ կայանների և բամբակաղտիչ գործարանների դիրեկտորները ապրոբատորների հետ միասին, ապրոբացիոն արձանագրություններից կազմում են քաղվածքներ, վորոնց մեջ նշվում են հողամասերը, դաշտերն ու սերմացու հումքի վորակը, վորպիսին պիտի մթերեն կոլտնտեսությունները և մեհանտնտեսները։

Այդ քաղվածքները խմբակային գյուղատնտեսների միջոցով հանձնվում են բրիգադիրներին, վորոնք և պատասխանատու յեն սերմացու բամբակը թե առանձին հավաքելու, և թե գնման կետերին այն առանձին հանձնելու համար։

Խմբակային գյուղատնտեսների և բամբակաղտիչ գործարանների աշխատակիցների միջոցով կոլտնտեսականները ծանոթանում են բամբակի հումքի սահմանված ստանդարտների հետ, առանձին դաշտերի և հողամասերի ըստ բամբակաթելի յերկարության բաժանման հետ, նույնպես և բամբակի դաշտային ապրոբացիայի տվյալների հետ։

6. Մինչև բամբակի բերքահավաքը յուրաքանչյուր կոլտնտեսությունում հատկացնել վորոշ քանակով փոխադրական միջոց՝ բամբակն առանց տարայի փոխադրելու համար, վորպիսի նպատակով շինել-հարմարեցնել չթթաններ, կողքերը բարձրացնել և փոխադրական միջոցների բաց տեղերը և անցքերը վերանորոգել։

2. ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

1. Կտրականապես արգելվում է սահմանել մինչև այժմ կիրառվող պրակտիկան՝ 3 չանաք։ Բերքահավաքը պետք է սկսել անմիջապես, նայած կնգուղների բացվելուն, հաճախակի հետևողականորեն բամբակի դաշտերով անցնելով ու հավաքելով մինչև այդ որը բացված կնգուղները։

2. Բամբակը հավաքել միայն լավ բացված կընգուղներից, յերբ բամբակը հեշտությամբ դուրս է գալիս նրանից։

Ցրտերն սկսվելու նախորյակի առաջին բերքահավաքների ժամանակ կտրականապես արգելվում է բամբակը հանել կիսաբացված և չհասած կնգուղներից։

3. Բամբակը պետք է հավաքել չոր յեղանակին։ Վաղ առավոտյան հավաքելիս (յերբ դեռ ցողը նստած է), մինչև բարդանները լցնելը, հենց դաշտում բամբակը բրեզենտների կամ բարդանների վրա փռել-չորացնել։

4. Անձրևից հետո պետք է քիչ սպասել, մինչև բամբակը չորանա, և միայն դրանից հետո սկսել բերքահավաքը։

Յեթե անձրևից հետո հավաքած հումքը կունենա սահմանված նորմայից ավելի խոնավություն, անհրաժեշտ է այն՝ բրեզենտների կամ բարդանների վրա դաշտում չորացնել մինչև նորմալ, ստանդարտով սահմանված խոնավությունը, վորից հետո լցնել բարդանները։

5. Զորությունից, հիվանդություններից և վնասատուներից վնասված ու ժամանակից առաջ բացված կնգուղների բամբակը հավաքվում է առանձին և առանց խառնելու առողջ բամբակի հետ, հանձնվում է գնման կայանին առանձին։

Դեֆեկտավոր (պակասություն ունեցող, հիվանդ) լրիվ չբացված մասերով, դեղին փառով և սև բծերով բամբակը հավաքվում է զոգնոցի առանձին գրպանը։ Հետագայում հիվանդ բամբակը լցնում են առանձին բարդանների մեջ, վրան նշելով «հիվանդ բամբակ», և պասպորտով հանձնվում է գնման կայան։

6. Բամբակի հումքի հավաքը պետք է կատարվի բամբակենու դաշտային ապրոբացիայի հետևանքներին համապատասխան։ Այն ցանքերի բամբակի հումքը, վորոնք դաշտային ապրոբացիայի ժամանակ անպետք են համարվել իբրև սերմացու մթերելու համար, պետք է հավաքել, պահպանել և գնման կայաններին հանձնել մնացած հումքից բոլորովին առանձնացրած։

7. Կնգուղներից բամբակը պետք է հավաքել լրիվ, չթողնելով կնգուղների մեջ բամբակի մասնիկ։

8. Բամբակը հավաքել մաքուր, առանց ձեռքերով բռնելու կնգուղի տակի չորացած բաժակաթերթիկներից կամ չոր տերևներից, թույլ չտալով, վոր հումքի մեջ ընկնի վորևե աղբ։

9. Գետնից հավաքած բամբակը տեղավորել առանձին և լցնել առանձին բարդանների մեջ։

10. Հավաքած բամբակը դաշտում յուրաքանչյուր հավաքողից ընդունել առանձին ու նրա ներկայությամբ ճիշտ կշռել։ Թույլ չտալ հավաքած բամբակի քանակը վորոշել «աչքաչափով»։

11. Բամբակի հումքի հանձնվող քանակը ճշտիվ կոմպլեկտավորելու և բամբակազտիչ գործարանում մաքրելու համար, համաձայն կատարված դաշտային ապրոբացիայի, անհրաժեշտ է.

Զխառնել՝

ա) չոր ու թաց բամբակը
բ) առողջը և դեֆեկտավորը (պակասավորը)
գ) մինչև շախտան ու նրանից հետո քաղածը
դ) սերմացուն, պահեստին և վոչ սերմացուն
ե) յերկարաթելը կարճաթելի հետ

գ) զանազան արդյունաբերական սորտերը (I սորտ, I ցածր և այլն)

է) բուսաբանական այլատեսակները (№№ 915, 96, 246)։

12. Գնման կայաններին ու բամբակազտիչ գործարաններին հանձնվող բամբակի հումքի յուրաքանչյուր քանակի կցվում է պասպորտ՝ բրիգադիրի ու կոլտնտեսության նախագահի ստորագրությամբ, որի մեջ մանրամասն նշվում է.

ա) կոլտնտեսության անունը

բ) բրիգադի №-ը

գ) բուսաբանական այլատեսակությունը

դ) հիվանդ, չորությունից վտանգված կամ առողջ հումք

ե) մինչ շախտան կամ նրանից հետո քաղած հումք է

զ) սերմացու, պահեստի կամ վոչ սերմացու

է) բամբակաթելի յերկարությունն ըստ դաշտային ապրոբացիայի տվյալների

ը) արդյունաբերական սորտը (I սորտ, I ցածր և այլն)

թ) վոր ընպրոդուկցիան է։

Բամբակի հումքն առանց պասպորտների՝ գնման կայանների կողմից չի ընդունվելու։

13. Ցարովիզացիայի յենթարկված սերմերի ցանքերից և քիմիացման յենթարկված փորձադաշտերից հավաքած բամբակը հավաքվում և հաշվի յե առնվում առանձին։

14. Մինչև բամբակի բերքահավաքի վերջը շարունակ պայքարել բամբակի ցանքերն արածեցնողների, փչացնողների և բամբակը վատնողների դեմ՝ դատական պատասխանատվության կանչելով այդպիսիներին։

3. ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

1. Սերմացու հաշվվում է I տեսակների՝ շախտայից առաջ հավաքած այնպիսի հողամասերի հումքը, վորոնք ապրոբացիա անցկացնելուց հետո ճանաչված են իբրև սերմացու ցանքեր։ Սերմացու հումքի հավաքումը կատարվում է՝ հումքի և սերմերի մթերման, պահպանման և փոխադրության կանոնների համաձայն։

2. Ապրոբացիայի ժամանակ իբրև սերմացու ընտրված ցանքերը, նայած սորտի մաքրությանը, բաժանվում են հետեյալ կարգերի (կատեգորիաների).

I-ին կարգի—այն դաշտերը, վորտեղ ցանված են 95 % և բարձր տեսակավոր մաքրություն ունեցող սերմեր՝ համաձայն 1934 թվի ապրոբացիայի տվյալների.

II-րդ կարգի—այն դաշտերը, վորտեղ ցանված են 95%-ից ցած տեսակավոր մաքրություն ունեցող սերմեր (բայց վոչ պակաս 80 %-ից)՝ համաձայն 1934 թ. ապրոբացիայի տվյալների։

3. Սերմֆոնդի մթերման համար իբրև անպետք խոտանվում են հետազոտվող տեսակի՝ այլատեսակներով ուժեղ խառնված, չորությունից ուժեղ վնասված այն բոլոր ցանքերը, վորոնք բերքահավաքի ժամանակ տալիս են տվյալ շրջանի համար սահմանված բամբակաթելի յերկարության նորմայից պակաս, յու-

բաքանչյուր հետազոտվող սորտի համար 1,5 մմ։ Նույնպես պետք է խոտանել ցողունային ու կնգ ուղային ձևի գոմոզով, վիլտով և շիրայով (լվիճներով) ուժեղ վարակված դաշտերը։ Այն դաշտերից, վորոնք վարակված են գոմոզով և վիլտով, և վորոնց տեսակավոր մաքրությունը 80%-ից բարձր է, սերմացու հումքը մթերվում է առանձին։

Ծանոթություն. այդպիսի հումքից ստացված սերմը հանձնվում է Հողժողկոմատի հատուկ ֆոնդին։

4. Խոտանելուց հետո մնացած առաջին և յերկրորդ կատեգորիայի դաշտերը՝ նայած նրանց բերքատվությանը, բաժանվում են յերկու խմբի.

I խումբ—այն դաշտերը, վորոնք՝ համեմատելով տվյալ շրջանի համար սահմանված բերքատվության նորմայի հետ՝ ունեն բարձր և նորմալ բերքատվություն։

Այդ դաշտերից ստացված բերքը հատկացվում է սերմացուի և ցանելու համար։

II խումբ—այն դաշտերը, վորոնք տալիս են ցածր բերք, բայց տվյալ մասսիվի համար ընդունված միջին բերքատվության 50%-ից վոչ պակաս։

Այդպիսի դաշտերից ստացված բերքը մթերվում է պահեստի ֆոնդի համար։

5. Սերմացու հումքի բերքահավաքը կատարվում է առանձին՝ ապրոբացիայի սահմանած կարգերի համաձայն, վորի համաձայն բրիգադը կամ ողակը կատարում է առանձին բերքահավաք՝ ըստ սահմանած կարգերի՝ չխառնելով նրանք այլ հավաքածների հետ, ըստ վորում ողակը միանգամից հավաքում է միայն այս կամ այն կարգի հումքը։

Սերմացուի հումքը գնման կետերին հանձնելու ժամանակ, բացի հումքի հետ կցվող պասպորտը լրացնելուց, բարդանների վրա համապատասխան նշումներ են կատարվում.

I կատեգորիա՝ սերմացու կամ պահեստի

II » » » »

6. Բամբակենու ցանքերի բամբակաթելի տարբեր յերկարության առկայության դեպքում, վերջինները հավաքվում են ողակներով՝ ըստ տարբեր յերկարությունների։

7. Սերմացու հումքը հավաքելուց առաջ և առանձին կարգերի կամ բամբակաթելի առանձին յերկարության հողամասերի բերքահավաքը վերջանալուց հետո բոլոր պարկերը, վորոնց մեջ հավաքվել եր բամբակը, պետք է ուշադրությամբ մաքրվեն նրանց մեջ մնացած հումքից՝ շուռ տալով, թափ տալով և կարերի տեղերը մաքրելով։

8. Բերքահավաքի ընթացքում շախտան տալու դեպքում, վորի հետևանքով բամբակենու աճեցողությունը կանգ է առնում, դաշտերում յեղած նորմալ բացված ամբողջ բամբակը պետք է հավաքել շախտան սկսվելու առաջին 5—6 որվա ընթացքում և նրանք համարել մինչ շախտան հավաքված հումք։

9. Ելիտ-սերմնաբուծական ցանքերից հումքը հավաքելու ժամանակ, բամբակի հավաքման արտադրական նորմաները սահմանվում են սովորական նորմաներից 20—25% ցած, պահպանելով աշխորհերով ընդունված գնահատումները։

10. Ելիտ-սերմնաբուծական ցանքերից բամբակի

հումքի հավաքը կատարվում է գյուղատնտես-սերմնաբույծների անմիջական հսկողության տակ։

11. Սերմնաբուծական կոլտնտեսությունների այն մասսիվներում, որ նշանակված են թփեր ընտրելու համար 1936 թվի ելիտի բուծարանի համար, հումքը հավաքելը հետաձգում են և սկզբում հավաքը կատարում են առանձին նշված թփերից, իսկ հետո շարքերից՝ բուծարանի սերմնաբույծի հսկողությամբ և մասնակցությամբ, և հատուկ պարկ-տարայով հանձնում են ՄՏԿ-ի դժինգաուզին կից լաբորատորիան։

12. Սերմացու հումքն առանց տարայի տեղափոխելը, ինչպես և տարայով, բայց առանց մակագրության (մարկիրովկա) տեղափոխելը, կատեգորիկ կերպով արգելվում է։

13. I բեպրոդուկցիայի (I բեպրոդուկցիա նշանակում է այն սերմերը, որ ցանվում են առաջին տարին) ցանքերի բամբակահավաքը կատարվում է սերմնաբույծի հսկողության տակ և հանձնվում է ՄՏԿ-ին կից դժինգաուզին։ Նույն տեղն է հանձնվում և II բեպրոդուկցիայի բերքը։

14. Բամբակահավաքի ամբողջ կամպանիայի ընթացքում շրջհողբաժինները պարտավոր են ղեկավարել անհատական սեկտորի ինչպես բերքահավաքի գործը, նույնպես և ամենորյա հավաքած բամբակի առաքումը։

Գյուղխորհրդի նախագահները սիստեմատիկորեն շրջագայելով մենատնտեսների բամբակի դաշտերը, ստուգում են բերքահավաքի ժամանակին և որակով կատարվելը և բամբակի փոխադրությունն այն հաշվով, որպեսզի որվա հավաքած բամբակը հանձնվի գնման կայաններին նույն որը։

4. ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԲԱՄԲԱԿԱՀԱՎԱՔԸ

1. Բամբակի բերքահավաքը պնևմատիկ մեքենաներով կատարելու համար ընտրվում են միջակ խտություն ունեցող թփերով, ուղիղ շարքերով և ավելի համերաշխ բացված կնգուղներով հողամասերը։

2. Բերքահավաքը պնևմատիկ մեքենաներով կատարելու ժամանակ՝ բամբակն աղբոտելուց խուսափելու համար՝ արգելվում է.

ա) բաց բերանով շլանգը մոտեցնել հողին

բ) շլանգը մոտեցնել կանաչ կամ չոր տերևներին և կնգուղներին

գ) ներծծելու համար բերանին մոտեցնել կտրված կնգուղները՝ տերևակիցներով։

3. Իբրև պարտադիր կանոն՝ յուրաքանչյուր շլանգիստ պետք է ունենա գոտի՝ շլանգը կախելու համար, որով բամբակենու ճյուղերը և կնգուղները, շլանգիստի՝ շլանգով առաջ շարժվելու ժամանակ կապահովվեն կոտրվելուց և թափվելուց։

4. Մեկ թփից մյուսին անցնելու ժամանակ անհրաժեշտ է լավ հետևել, որ շլանգները գտնվեն շարքամիջերում և բամբակենու թփերը չջարդեն։

5. Յուրաքանչյուր շլանգիստի ամրացնել որոշ շլանգի և որոշ շարքերի, որոնց լրիվ բերքահավաքի համար և պատասխանատու կլինի նշված շլանգիստը։

6. Տուրմանը պետք է գնա վոչ թե հավաքողներին հավասար, այլ գտնվի որոշ տարածության վրա

և առաջ շարժվի միայն այն ժամանակ, երբ հավաքողն առաջ կանցնի, այսինքն՝ տուրմանը պետք է անցնի արդեն հավաքած հողամասով։

ՍԼԵԴԻՆԳՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

7. Հնասած կնդուղները սլեդինգներով հավաքելու համար առաջին հերթին ընտրել մոլախոտերից մաքուր ու չբացված կնդուղներով դաշտերը։

8. Սլեդինգների հավաքած չբացված կնդուղները խոշոր աղբից (ճյուղեր և այլն) մաքրվում է յեղանակով, վորից հետո կնդուղները մանր աղբից զատում են ձեռքով։

ԿՆԴՈՒՂԻՑ ԲԱՄԲԱԿԸ ՀԱՆՈՂ ՄԵՔԵՆԱՅԻ (ворохоочиститель) ԱՇԽԱՏԱՆՔԸ

9. 25 % խոնավություն ունեցող կնդուղները (փեղկերը մուգ շագանակագույն, շոշափելիս չոր, ջարդվող) մաքրվում են վերոհիշյալ մեքենայով։

10. Այն կնդուղները, վորոնք ունեն ավելի խոնավություն (շագանակագույն, շոշափելիս թաց, փեղկերը հեշտությամբ ծալվում են՝ առանց ջարդվելու, նույնպես և կանաչ) մեքենայով մաքրելու համար պետք է ворохоочиститель չորացնել խոնավության մինչև 15—20 %-ը (փեղկերը հեշտությամբ ջարդվում են, բայց դեռ փոշի չեն անում)։

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Բամբակի բերքահավաքը կատարում է ողակը՝ ողակավարի ղեկավարությամբ՝ ողակին ամրացված

այն հողամասից, վորի վրա նա տարել է մշակման աշխատանքները։ Ողակավարը՝ բրիգադիրից ստացած հնգորյա առաջադրանքի հիման վրա՝ ամեն որ ողակի յուրաքանչյուր անդամին հատկացնում է մի քանի շարք, վորտեղ և վերջինս կատարում է բերքահավաքը։

Այն դեպքերում, երբ տվյալ ողակի հողամասում չկան լավ բացված կնդուղներ՝ բերքահավաքի տեմպերն ամբողջությամբ վերցրած կոլտնտեսությունում չթուլացնելու նպատակով՝ բրիգադիրն իրավունք ունի, իբրև բացառություն, թույլ տալ ողակը ժամանակավորապես փոխադրել այլ հողամաս։

Այդպիսի փոխադրության դեպքում ողակը պարտավոր է անընդհատ հետևել յուր հողամասի բամբակենու դրությանը և բացվելու սկզբում պետք է վերադառնա յուր հողամասը։

Այն ողակը, վորին ոգնություն է ցույց տրվում, կանտրոլի յե յենթարկում փոխադրված ողակի աշխատանքը և նրա համար պատասխանատու յե։

2. Յուրաքանչյուր ողակի ներսում բամբակի հումքի բերքահավաքը կատարվում է բացառապես անհատական գործարքի հիմունքներով։

3. Առաջադրել (խորհուրդ տալ) կոլտնտեսություններին՝ ողակավարին հաշվել լրացուցիչ 10—15 % աշխոր՝ առաջադրանքն ողակի կողմից կատարվելու պայմանով։

4. Յուրաքանչյուր որվա վերջին բրիգադիրը բրիգադի անդամներին հայտնում է նրանց՝ որվա ընթացքում վաստակած աշխորերի թիվը և հնգորյակում մի անդամ աշխորերը գրանցում է կոլտնտեսականների աշխգրքույկներում։

5. Բամբակի բերքահավաքի արտադրանքի նորմանները պետք է այնպես կառուցված լինեն, որ առավելագույն չափով շահագրգռեն հավաքողին։ Դրա համար էլ արտադրանքի նորմանները պետք է դնան բարձրացող կորագծով՝ սկսած բերքահավաքի առաջին որերից մինչև կնգուղների մասսայական բացումը, իջեցնելով այն մինչ շախտային բամբակի բերքահավաքի վերջում։

Շախտայից հետո բամբակը հավաքելու համար՝ չբացված կնգուղների համար պետք է սահմանվեն այլ նորմաներ։

Սահմանված նորմաներից ավելի հավաքած բամբակի համար աշխորերի հատկացումը պետք է բարձրացնել, որինակ՝ մեկուկես անգամ։

Ցելնելով դրանից՝ կոլտնտեսությունները պետք է արտադրական պլաններում իրենց ընդունած նորմանները վերանայեն և ճշտեն։ Շրջհողբաժինները և ՄՏԿ-ները նորմաներ վերամշակելու գործում կոլտնտեսություններին պետք է իրական ոգնություն ցույց տան ու ղեկավարեն։

6. Տուրմաններով բերքահավաքի դեպքում առաջարկել որական արտադրանքի և աշխորերով գնահատության հետևյալ որինակելի նորմանները.

10 շլանգանի տուրմանի համար՝ 450 կլգր. և յուրաքանչյուր շլանգիստի 1,5 աշխոր.

6 շլանգանի տուրմանի համար 300՝ կլգր. և յուրաքանչյուր շլանգիստի 1,5 աշխոր.

Ղեկավար-տրակտորիստին՝ արտադրանքի նորման կատարելու համար 3 աշխոր։

7. Կնգուղներն սլեդինգներով հավաքելու դեպքում առաջադրել արտադրանքի և աշխորերով գնահատության հետևյալ նորմանները.

2 շարքանի սլեդինգների համար 3 հեկտ՝ 1,75 աշխոր
4 » » » 5 » 1,75 »

8. Բամբակի բերքահավաքի արտադրողականությունը բարձրացնելու համար առաջադրել հումքի հավաքը կատարել յերկու ձեռքով։ Կոլտնտեսականների ավելի լայն մասսաները շահագրգռելու՝ բամբակի բերքահավաքը յերկու ձեռքով կատարելու համար՝ պարգևատրել աչքի ընկնող կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին։

9. Կանանց աշխատանքն ավելի լավ ոգտագործելու համար, որ վճռական նշանակություն ունի բամբակի բերքահավաքը յուր ժամանակին վերջացնելու համար, անհրաժեշտ է մանկամսուրների և մանկահրապարակների մանրամասն ստուգում կատարել ու կոնկրետ միջոցներ ձեռք առնել նրանք ապահովել համապատասխան կադրերով, անհրաժեշտ ինվենտարով, սննդամթերքներով և այլն։

ՀՍԽՀ Հողժողկոմ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
Вм. А. Мясникян
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա. ՎԱՆ
Հրատանդ — 37706
37706

ԲԱՄԲԱԿԻ 1935 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔՆ ՈՒ ՄԹԵՐՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ) Կենտկոմը՝ բամբակի 1935 թվականի բերքահավաքն ու մթերումը հաջող կազմակերպելու նպատակով վորոշում են.

1) Բերքահավաքն ավարտելու և բամբակը պետությանը հանձնելու ժամկետ սահմանել դեկտեմբերի 1-ը՝ հետևյալ բաշխմամբ ըստ ամիսների, հաշված տոկոսներով՝ տարեկան պլանի համեմատությամբ՝

Սեպտեմբեր	10 տոկ.
Հոկտեմբեր	50 »
Նոյեմբեր	40 »

2) Հաստատել բամբակի մեքենայացված բերքահավաքի պլանը 300 տոննն, հետևյալ բաշխմամբ ըստ շրջանների՝

Հոկտեմբերյանի շրջան	120 տոննն
Ղամարլվի շրջան	80 »
Վաղարշապատի շրջան	70 »
Վեդու շրջան	30 »

3) Հողժողկոմատին և Հայբամբակտրեստին՝ մինչև սեպտեմբերի 1-ը տեղերն ուղարկել բամբակ հանձնելու շրջանային ամսական պլանները. առաջարկել շրջգործկոմներին, ՀԿ(բ)Կ շրջկոմներին և ՄՏԿայանների դիրեկտորներին հաստատել և վոչ ուշ քան սեպտեմբերի 5-ը կոլտնտեսություններին, կոլտնտեսային բրիգադներին ու անհատական աշխատավորական տնտեսություններին հասցնել բամբակի հանձնման որացուցային պլանները։ Մինչև սեպտեմբերի 1-ը մեքենայացված բերքահավաքի պլանը հասցնել մինչև յուրաքանչյուր բամբակահավաք մեքենան։

4) Պարտավորեցնել Հողժողկոմատին՝

ա) Բոլոր կոլտնտեսություններում ստուգել բերքահավաքի ընթացքում աշխատանքի կազմակերպման հետ կապված ձեռնարկումները (բրիգադների, ողակների կազմը, վերջիններիս մինչև բերքահավաքի վերջը վորոշ հողամասեր ամրացնելը, մինչև բերքահավաքը վաստակած աշխորերը գումարելն ու կոլտնտեսականների աշխգրքույկների մեջ գրանցելը), միևնույն ժամանակ ճշտելով արտադրանքի նորմաներն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության ու յուրաքանչյուր բրիգադի՝ նայած բամբակենու վիճակին։

բ) Բամբակի բերքահավաքի աշխատանքները կատարել անհատական գործարքի հիման վրա, պարտադիր կարգով ամեն որ հաշվի առնելով յուրաքանչյուր կոլտնտեսականի հավաքած բամբակը, և կատարված աշխատանքի արդյունքը կոլտնտեսականների աշխատանքային գրքույկների մեջ գրանցել վոչ ուշ քան հինգ որը մեկ անգամ։

գ) Սերմացու բամբակի բերքահավաքի վորակը բարձրացնելու նպատակով՝ վերջիններիս աշխատանքի նորման սահմանել սովորական նորմայից 20—25 տոկոսով ցածր, այդ աշխատանքի համար առանձնացնելով լավագույն բամբակ հավաքողներին։ Հսկողության

տակ առնել բերքահավաքը սերմնաբուծական կոլտնտեսություններում, առանձնապես եղիտային հողամասերում։

դ) Վոչ ուշ քան մինչ սեպտեմբերի 1-ը շրջհողբաժիններին, ՄՏԿայաններին ու խորհտնտեսություններին ուղարկել հատուկ հրահանգ՝ բամբակի բերքահավաքի կանոնների մասին։

ե) Մինչև սեպտեմբերի 10-ն ավարտել բամբակի մեքենայացված բերքահավաքի կադրերի (մեքենավարների, մեխանիկների) պատրաստման ու վերապատրաստման դասընթացների աշխատանքը, տրակտորներն ապահովելով փորձված տրակտորիստներով։ Նույն ժամկետին ավարտել բերքահավաքի մեքենաների պլանով սահմանված վերանորոգումն ու մոնտաժը։

զ) Մինչև սեպտեմբերի 10-ն ստուգել դաշտային կայանների, մանկական մսուրների և կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային սպասարկման ամբողջ գործի վիճակը, այն հաշվով, որ մինչև բերքահավաքի սկիզբը վերանորոգվեն ու կարգի բերվեն դաշտային կայանները, կայաններին կից կազմակերպվեն մսուրներ, կուլտսպասարկում և սնունդ։

է) Բամբակի սերմացվի ցանքերի ապրոբացիան ավարտել մինչև սեպտեմբերի 20-ը և ապահովել սերմացու բամբակի բերքահավաքն ապրոբացիայի արդյունքներին համապատասխան։

ը) Կազմակերպել հավաքվող բամբակի նախնական տեսակավորումը դաշտում՝ ըստ մթերման ստանդարտների։

Մթերակայանների վարիչներին և ՄՏԿայանների

դիրեկտորներին՝ մինչև սեպտեմբերի 5-ը բրիգադիրներին ու բամբակ հավաքողներին ծանոթացնել բամբակի ստանդարտներին, հետագայում հրահանգելով և վերահսկողություն սահմանելով դաշտում բամբակի ճիշտ բերքահավաքի ու տեսակավորման նկատմամբ։

5) Տեղական արդյունաբերության ժողկոմատին, Հողժողկոմատին և Հայկոոպին՝ կոլտնտեսություններն ապահովել անհրաժեշտ քանակությամբ կշռաքարերով ու կշեռքներով։

Զափ ու Կշռի Վարչությանը՝ կոլտնտեսություններում ու մթերակայաններում մինչև սեպտեմբերի 10-ը կշեռքների ու կշռաքարերի ստուգում կատարել։

6) Պարտավորեցնել շրջգործկոմներին, շրջհողբաժիններին, ՄՏԿայանների դիրեկտորներին՝ կազմակերպել հավաքված բամբակն ամեն որ պարտադիր կերպով անմիջականորեն դաշտից գնման կայանները փոխադրելու գործը, թույլ չտալով, որ բամբակն աղբակալվի ու կեղտոտվի բերքահավաքի ու փոխադրման ժամանակ։

Բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել հատուկ պաշտպանություն՝ բամբակի ցանքերն արածեցնելուց և բերքը հափշտակումներից պահպանելու համար։ Պարտավորեցնել դատական մարմիններին պատասխանատվության յենթարկել ցանքերն արածեցնող, բամբակը փչացնող ու հափշտակող հանցավորներին։

7) Սահմանել, որպես պարտադիր կանոն, որ կոլտնտեսություններն ու անհատական տնտեսությունները նախապես չորացնեն ստանդարտով նախատեսվածից ավելի խոնավ բամբակը։

8) Առաջարկել շրջկոմներին, շրջգործկոմներին և ՄՏԿայանների դիրեկտորներին այնպիսի կարգ սահմանել, որ ազատված բամբակի դաշտերում անմիջապես հավաքվեն ցողունները և աշնանավար կատարվի։

ՀՍԽՀ Ժողկոմխորհն ու ՀԿ(բ)Կ Կենտկոմը բամբակի բերքահավաքի ու հանձնման պլանների կատարմանը զուգընթաց, շրջգործկոմների նախագահներից, ՀԿ(բ)Կ շրջկոմի քարտուղարներից, շրջհողբաժիններից ու ՄՏԿայանների դիրեկտորներից պահանջում են հատուկ ուշադրություն դարձնել հավաքվող բամբակի վորակի նկատմամբ այնպես, որ չթույլատրվի չհասունացած բամբակի բերքահավաքը, որ բամբակի զանազան տեսակները չխառնվեն իրար՝ հատկապես մինչ ու հետսառնամանիքայինները, ինչպես նաև առողջ և հիվանդություններից ու գյուղատնտեսական վնասատուներից վնասված բամբակը չխառնելը։

Բամբակի բերքահավաքի ասպարիզում.

1) Բամբակ-տրեստին՝ վոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 15-ը լիակատար պատրաստ վիճակի բերել բոլոր մթերակայաններն ու բամբակազտիչ գործարանները, ավարտել ծածկերի վերանորոգումը, հատակների ասֆալտումը, բակերի սալահատակումն ու հարթումը՝ մթերված բամբակը նորմալ կերպով ընդունելու ու պահպանելու համար։

2) Ղամարլվի ու Ցերևանի նոր ծածկերի կառուցումն ավարտել մինչ սեպտեմբերի 25-ը։ Պահեստի շենքերով չապահովված բամբակի համար բերքահավաքի սկզբից հենց պատրաստել հատուկ հրապարակներ այն հաշվով, որ սեպտեմբերի ու հոկտեմբերի բերքը (բացի սերմացու և առաջին տեսակի բամբակից) հակերով դրվեն չոր հրապարակներում, ծածկերը թողնելով ավելի ուշ հավաքված բամբակի պահպանման համար։

3) Վոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 5-ը բամբակագտի գործարանները, մթերակայանները, ՄՏ Կայաններն ու կոլտնտեսություններն ապահովել բամբակի ստանդարտների նմուշներով, բոլոր կոլտնտեսականներին լիովին ապահովելով բամբակի ստանդարտների նկարագրությամբ՝ հայերեն ու թուրքերեն լեզուներով։

4) Բամբակի ընդունումը, տեսակավորումը, պահպանումն ու փոխադրումը կատարել ըստ Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի կողմից սահմանված տեսակների ու դասերի, ինչպես նաև այլաձևությունների ու յերկարության։ Մթերակայաններում բամբակի ընդունումը կատարել առանց ընդմիջման։

5) Բամբակտրեստին և մթերումների կոմիտեյի շրջանային լիազորներին՝ սիստեմատիկ վերահսկողություն կազմակերպել մթերակայանների աշխատանքի նկատմամբ և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի վորոշմանը համապատասխան սահմանել բամբակի ընդունման այնպիսի կարգ, վորը վերացներ չարաշահումների, կոլտնտեսականների հանձնած բամբակի թերակշռման ու տեսակները սխալ վորոշելու հնարավորությունը և ապահովել հանձնվող բամբակի մանրաղնին հաշվառումն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության ու անհատական տնտեսության, ինչպես նաև կոնտրակտացիայի պլանը գերակատարելու համար հասանելիք հավելումների և մրցանակների ժամանակին վճարումը։

6) Բամբակի ճիշտ բերքահավաքն ապահովելու նպատակով պարտավորեցնել Բամբակտրեստին կոլտնտեսականներին ապահովել յերկու դրպանանի գոգնոցներով։ Առաջարկել Սաևտրի ժողկոմատին այդ նպատակի համար առանձնացնել 12.000 մետր բյաց։

7) Կենտկոմի Գյուղատնտեսական բաժնին. մինչև սեպտեմբերի 5-ը մթերման ցանցի կադրերի ստուգում անցկացնել և Բամբակտրեստի հետ միասին ապահովել գնման կայանների հաստիքների լրիվ կոմպլեկտավորումը։

8) Մինչև սեպտեմբերի 1-ն ավարտել յեղած պարկ-տարայի, բրեզենների, կշռասարքերի տնտեսության ու լաբորատորիաների սարքավորման վերանորոգումը։ Ապահովել նոր բարդանների առնվազն ութ շրջանառություն՝ վերջիններիս ռացիոնալ ոգտագործման միջոցով և բարդանները կոլտնտեսություններին բաց թողնել, նայած նրանց բամբակի բերքահավաքին ու հանձնման տեմպերին։ Սերմնաբուծական կոլտնտեսությունների հումքի համար բարդանների մատակարարման կրկնակի նորմա սահմանել։ Առաջարկել Բամբակտրեստին Հողժողկոմատի հետ միասին հինգ որվա ընթացքում Ժողկոմխորհին ներկայացնել տարայի բաշխումն ըստ շրջանների, միևնույն ժամանակ կազմակերպելով դեռ անցյալ տարվանից կոլտնտեսականների ու մենատնտեսների մոտ մնացած պարկ-տարաների հավաքումը և կարկատել կոլտնտեսություններում յեղած պարկ-տարաները։

9) Պարտավորեցնել շրջգործկոմների նախագահներին, շրջկոմի քարտուղարներին, ՄՏԿայանների ու բամբակաղտիչ գործարանների դիրեկտորներին և

մթերակայանների վարիչներին կազմակերպել 1935 թվականի բամբակի բերքի 10 տոկոսի փոխադրումը գործարաններն՝ առանց տարայի, վորի համար անհրաժեշտ և անմիջապես մինչև շրջաններն ու յուրաքանչյուր կոլտնտեսությունը հասցնել առանց տարայի փոխադրման կոնկրետ պլանը, ստուգել կոլտնտեսությունների փոխադրական միջոցները, զամբիլի, չափանների, փանների մթերման ընթացքը։

10) Բամբակտրեստին՝ անմիջապես ձեռնարկել ավտոմեքենաների վերանորոգմանը, ավարտելով այն մինչև սեպտեմբերի 10-ը և պայմանագիր կնքել Հողժողկոմատի Բամբակվարչության հետ՝ բամբակացան ՄՏԿայանների տրանսպորտը բամբակի փոխադրման համար ոգտագործելու վերաբերյալ։

11) Առաջարկել Ավտոբեմնարին, Ռեզինոսբիտին, Հայկոոպին՝ Բամբակտրեստի ավտոպարկն ապահովել պահանջվող քանակությամբ պահեստի մասերով, ռեզինով, վառելիքով և յուղերով։

12) ՀՍԽՀ Ժողկոմխորհին կից՝ ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի Մթերման կոմիտեի լիազորությանը և Բամբակտրեստի վրա պարտականություն դնել՝ մշակելու և իրենց սիստեմի գծով տեղերն ուղարկելու՝ կորուստների դեմ պայքարելու վերաբերյալ հրահանգը։

13) Պարտավորեցնել Հայճանտրանսին, շրջգործկոմների նախագահներին և ՄՏԿայանների դիրեկտորներին ճանապարհների ու մատուցուղիների վերանորոգումը և բամբակի բեռների փոխադրման բոլոր ճանապարհների կամուրջների վերանորոգումն ու կառուցումն ավարտել վոչ ուշ, քան մինչև այս տարվա սեպտեմբերի 1-ը։

14) Ցերևանի նոր բամբակազտիչ գործարանի մոնտաժն ավարտել մինչև սեպտեմբերի 15-ը։

15) Մինչև սեպտեմբերի 10-ը կոմպլեկտավորել բամբակազտիչ գործարանները յեռհերթ աշխատանքն ապահովող բանուժով։

16) Կատարել բուսաբանական ու արդյունաբերական տեսակների սերմացվի զտում՝ բամբակենու դաշտային ապրոբացիայի արդյունքներին համապատասխան։

17) Բամբակտրեստին՝ վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի մեկը լիովին ավարտել բամբակազտիչ գործարաններում ու մթերակայաններում յեղած հակահրդեհային տնտեսության վերանորոգումը, վերջիններս ապահովելով պակասորդ ինվենտարով։ ԱՍՍՀՄ-ի Ներքգործժողկոմատի ՀՍԽՀ լիազոր ընկ. Մուղդուսին՝ մինչև սեպտեմբերի 20-ը լիովին կատարել հակահրդեհային տնտեսության ու պաշտպանության վիճակի ստուգումը ՀՍԽՀ բամբակսիստեմում։

18) Կոլտնտեսային ակտիվին և մթերման սիստեմի, բամբակազտիչ գործարանների ու ՄՏԿայանների աշխատողներին հրահանգելու և նրանց ուշադրությունը բամբակի բերքահավաքի ու մթերման խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու նպատակով, կենտկոմն ու ժողկոմխորհն առաջարկում են շրջաններում մինչև սեպտեմբերի 5-ն անցկացնել՝

ա) կոլտնտեսային ակտիվի հավաքներ, վորտեղ հանրագումարի բերել ցանքի մշակման արդյունքները և քննության առնել բամբակի բերքահավաքի ու մթերման խնդիրները։

բ) մթերման սիստեմի ու բամբակազտիչ գործարանների աշխատողների խորհրդակցություններ։

գ) մինչև սեպտեմբերի 10-ը բամբակացան շրջանների կոլտնտեսությունների, ՄՏԿայանների, բամբակազտիչ գործարանների, մթերակայանների բոլոր սկզբնական կուսկազմակերպություններում անցկացնել կուսակցական որ՝ նվիրված 1935 թվականի բամբակի բերքահավաքն ու մթերումը նախապատրաստելու և անցկացնելու հարցերին։

Բամբակի բերքահավաքի ու մթերման կամպանիաների սպասարկման տպարիզում.

1) Առաջարկել Հայկոոպին (ընկ. Կոստանյանին), Հայատին (ընկ. Զուրաբյանին), Հայսնունդաին (ընկ. Զախմախչյանին)՝ սահմանված ժամկետներին ապրանքներ ներմուծել բամբակացան շրջանները, համաձայն Հայաստանի Ժողկոմխորհի կողմից հաստատված պլանի։

2) Հայկոոպին՝ մինչև սեպտեմբերի 5-ը լիովին ավարտել 30 շրջիկ-կրպակների կազմակերպումը բամբակացան շրջաններում։ Բամբակի բոլոր մթերակայաններին կից կազմակերպել թեյարաններ։ Դաշտերում ևս կազմակերպել կոլտնտեսային ինքնագործ սնունդ։

3) Առաջարկել Սննդաին շրջիկ-կրպակների և շրջավաճառների թիվը բամբակացան շրջաններում հասցնել 12-ի։

4) Առաջարկել Ներքառժողկոմատին (ընկ. Դասակյանին), Հայսնունդաին (ընկ. Զախմախչյանին), Հայկոոպին (ընկ. Կոստանյանին) 5 որվա ընթացքում ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել բամբակացան շրջանների հացի, ալյուրի և հացահա-

տիկի վաճառքը ծավալելու կոնկրետ պլանը, իսկ Զաղոտղեանոյին (ընկ. Քոչարյանին)՝ հացահատիկին ու այլուրը ժամանակին փոխադրել շրջաններ։

5) Հանձնարարել Ներքաղաքային առևտրի կոմատին (ընկ. Դաստակյանին) հսկել առևտրական ցանցը ժամանակին ծավալելու ու բամբակացան շրջաններն ապրանքներ փոխադրելու վրա և տասն օրը մեկ անգամ ինֆորմացիա ներկայացնել Ժողկոմխորհին։

6) Հայտնարկոոպին՝ (ընկ. Թարարյանին) առանձնացնել հետևյալ շրջիկ բրիգադները.

լծասարքի վերանորոգման՝ չորս բրիգադ.

գումակային ու գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման՝ վեց բրիգադ.

ձիերի պայտման՝ վեց բրիգադ.

շորեր կարելու ու կարկատելու՝ չորս բրիգադ.

կոշիկներ կարելու ու կարկատելու՝ չորս բրիգադ։

7) Առաջարկել Հայգյուղտնտմատին (ընկ. Գեվորգյանին) և Հայկոոպին (ընկ. Կոստանյանին)՝ ապահովել անհրաժեշտ քանակությամբ կշեռքների ու կշռաքարերի, ինչպես նաև սայլակների, լծասարքի և այլնի վերանորոգման նյութերի ժամանակին փոխադրումն ու վաճառքը կոլտնտեսություններին։

8) Հանձնարարել լուժողկոմատին՝

ա) բամբակացան շրջանների մանկահրապարակներում ընդգրկել 8295 յերեխա։ Գործուղել չորս աշխատողներ՝ նախադպրոցական հրմնարկներին հրահանգելու համար.

բ) կազմակերպել ութը կարմիր վրան, ապահովելով նրանց գրականությամբ։ Վրաններում կազմակեր-

պել քաղաքական ու գեղարվեստական գրականություն, ինչպես նաև թերթերի սիստեմատիկ ընթեցանություն.

գ) կոլտնտեսային ակումբների միջոցով կազմակերպել դաշտային տեղեկատու սեղաններ.

դ) Յերևանի Պետթատրոնի ուժերով բամբակացան շրջաններում կազմակերպել 20 ներկայացում, Ղամարլվի թատրոնի ուժերով՝ 20 ներկայացում, Թուրքական թատրոնի ուժերով՝ 45 ներկայացում.

ե) արևելյան անսամբլի ուժերով կազմակերպել 30 համերգ։

9) Առաջարկել Հայկինոյին՝ բամբակացան շրջաններում ապահովել 12 շրջիկ կինոների կանոնավոր աշխատանքը։

10) Առաջարկել Ռադիո-կոմիտեին կազմակերպել բամբակի բերքահավաքի կամպանիայի սպասարկումը հատուկ ռադիո-հաղորդումներով։

11) Առաջարկել Գյուղհրատին մինչև սեպտեմբերի 5-ը լույս ընծայել տուրման-վակուումների վերաբերյալ բրոշյուրը և հրատարակել պլակատներ ու հրահանգ՝ բամբակի բերքահավաքի մասին։

12) Հանձնարարել Առժողկոմատին.

ա) բերքահավաքի կամպանիայի ընթացքում վերաբաշխել շրջանային բուժկետերի ու բուժարանների աշխատանքն այնպես, որ կոլտնտեսականներն ու աշխատավոր-մենատնտեսներն ապահովվեն բուժսանիտարական սպասարկմամբ՝ դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ.

բ) շրջանային բուժկետերի ու բուժարանների վարիչների վրա դնել դաշտերում կոլտնտեսականների

ու աշխատավոր մենատնտեսների բուժոգնությունը կազմակերպելու պատասխանատվությունը, բուժանձնակազմին պարտավորեցնելով սիստեմատիկաբար մեկնել դաշտերը՝ առաջին ոգնություն ցույց տալու, սանիտարական աշխատանք կատարելու, առաջին ոգնության կայանների աշխատանքը ղեկավարելու և այլն.

գ) բերքահավաքի կամպանիայի ամբողջ ժամանակամիջոցում շրջանային կենտրոնների բուժաշխատողներից բամբակացան շրջաններն ուղարկել 37 բժշկական բրիգադ՝ առնվազն հինգական որ ժամանակով.

դ) բերքահավաքի կամպանիայի սպասարկման ասպարիզում շրջաններին ոգնություն ցույց տալու համար Ցերևանից շրջաններն ուղարկել վեց բժիշկ և շրջիկ կոլտնտեսային ավտոբուժարան (բաղկացած 2—3 բժշկից և մանկաբարձուհի-բուժակուհուց).

ե) բոլոր շրջանային դեղատներն ապահովել անհրաժեշտ քանակությամբ դեղորայքով (խինին և այլն) և վիրակապության նյութերենով.

զ) մինչև սեպտեմբերի 10-ը կազմակերպել գյուղական 183 մասուր։

ՀԱՅ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ՀՍՍՀ
Ա. Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0280483

18436 32

НАРКОМЗЕМ ССРА—ХЛОПКОВОЕ УПРАВЛЕНИЕ

Инструкция по сбору хлопка

СЕЛЬХОЗГИЗ-ЭРИВАНЬ 1935.